

Բ Ե Ջ Մ Ե Վ Է Պ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԵՍՈՒՐԱԿԱՆ

ԳԻՏԵՆԵԸՑ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 17.

1845

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հանքային ածուխ :

Երկրիս հողերուն խիստ խորունկ կարգերէն ինչուան երեսի կարգը շատ մը դիւրավառ նիւթեր կը գտնուին որ շատ կամ քիչ նմանութիւն մը կ'ու նենան սովորական ածուխի հետ, կամ իրենց բաղադրութեամբը և կամ իրենց սե գունին կողմանէ : Եւ կարգերուն թանձրութիւնը իրարմէ աւելի կամ պակաս կ'ըլլայ, երբեմն ալ կարգ մը քար կ'եղէ՝ կարգ մը աս նիւթերէն, կամ թէ ուրիշ նիւթերու մէջ ցրուած : Հանքաբանները աս նիւթերուս այլեւայլ անուններ դրած են . զոր օրինակ հանքային ածուխ, հողային ածուխ, ածխաքար, կայծաքար, փայտաքար, թորպա և այլն . բայց շատ անգամ աս անունները իրարու տեղ կը գործածեն :

Կայծաքարը՝ փայլուն սև է . կազմութիւնը երբեմն կեղև կեղև է, երբեմն խիտ, երբեմն ալ հատ հատ . դժուարաւ կ'այրի, և բոց՝ հոտ ու ծուխ գրեթէ ամենեւին չունի . անոր համար անհիշելի հողային ածուխ ալ կ'ըսուի : Փայտաքարը՝ սովորաբար թուխ

կ'ըլլայ, բայց ածուխի պէս սևն ալ կը գտնուի . կազմութիւնը փայտի պէս թել թել է, ուստի տարակոյս չկայ որ փայտերէ ձևացած ըլլայ . բոցը պայծառ է ու երկար ատեն կը դիմանայ, բայց հոտը սուր ու անախորժ է . մէջը անոյշ ջրի խեցիներ ու կենդանեաց ոսկորներ ալ կը գտնուին :

Թորպային՝ կազմութեամբը սպունգի պէս ծակ ծակ ու թեթեւ է, գոյնն ալ սև . ջրային բուսոց կտորուանք կայ մէջը . բոց չհաներ, բայց դիւրաւ կ'այրի՝ գէշ հոտ մը հանելով : Երկայ ալ երկրիս երեսը կամ ձորերու տակ կը գտնուի :

Հանքային ածուխը կայծաքարին ու փայտաքարին մէջտեղը կը սեպուի իրեն արտաքին կազմութեանը ու դիրքերուն նայելով, անանկ որ երբեմն անոնց հետ ալ կը շփուի : Երկրիս մէջ գտնուած ամէն տեսակ ածուխներէն աւելի գործածական է, և ամենէն աւելի ասոր ետեւէ կ'ըլլան մարդիկ : Հողային ածուխ և ածխաքար՝ ըսուածն ալ ասիկայ է : Վոյնը

1 Գ. Anthracite.

2 Գ. Lignite.

1 Գ. Tourbe.

2 Գ. Charbon de terre.

փայլուն սև է, երբեմն ալ կանանչ կարմիր ծիածանի գոյն կ'առնէ. սաստիկ դիմահար է, անանկ որ եղունգով չգրծուիր. բայց ուրիշ նիւթերու հետ խառնուած ըլլայ նէ փշրուն կ'ըլլայ. թերթ թերթ կամ ձկան թեփի պէս զուգահեռօտն ձևեր կը բաժնուի, դիւրաւ կ'այրի ճերմակ ու կապտագոյն լուսով մը. հոտն ու բոցը ձիւթի հոտին ու բոցին նման է, ոչ սաստիկ սուր է և ոչ այնչափ անախորժ: Իրեն բաղկացուցիչ նիւթերն են ածուխ, ձիւթ ու ջրածին կազ, երբեմն ալ ծծումբի ու երկրթի խառնուրդ կ'ունենայ: Թէ որ թորեցնես, մէջէն կ'ելլէ եղ, ամոնիաք. երբեմն ալ առանց ամոնիաքի ծծմբային թրթուռ. մնացածը հասարակ ածուխին շատ նման է, բայց այրելու ատեն բոց ու հոտ չհաներ. Լնգղիացիք ասոր քիւ կ'ըսեն, ու տնական և արհեստական բաներու մէջ շատ կը գործածեն:

Հանքային ածուխը գլխաւոր իրեք տեսակ կը բաժնուի. այսինքն խիւ, պարարտ ու ցամաք: Լն հանքիս մեծամեծ խաւերը կամ կարգերը ինչուան խիստ բարձր տեղուանք ալ կը գրտնուին: Քորտիլեան լեռներուն մէջ Սանթա-Ֆէ ըսուած տեղը 4100 մետր ծովուն երեսէն բարձր ածխահանք կայ, Սալոյայի մէջ ալ 1000 մետր. բայց շատ տեղեր ալ ծովուն երեսէն հարիւրաւոր մետր ցած կը գտնուի: Լեւի շատ գտնուած տեղերը նախնական լեռներուն ստորոտներն են, և ան երկիրները՝ որ երկրորդական կիժերորդական հողերէ ձևացած են: Լնգղիայի մէջ ինչպէս ամէն տեղէ աւելի կը գործածուի, ասանկ ալ ամենէն շատ ետեւէ են աս հանքը հանելու: Երբեմն թէ շինու ու Ղեփոնի մէջ ալ շատ կայ, որ տնական բաներու մէջ շատ կը գործածեն:


Հանքային ածուխը Լնգղիայի հարստութեան մեծ պատճառ եղած է. վասն զի ասով է որ անթիւ գործարաններ կը բանին, ու շոգենաւերով

աշխարհքիս չորս կողմը իր վաճառքները կ'երթան. ասկէ կը հանեն նաև կազը՝ որով գիշեր ատեն ցորեկուան պէս պայծառ լոյս մը կը վայելեն թէ Լնգղիացիք և թէ ուրիշ մեծամեծ քաղաքներ: Լնգղիայի թագաւորութեան մէջ ամէն տարի 30,000,000 տակառաչափ՝ հանքային ածուխ կը գործածուի. իսկ տէրութեան մէջէն դուրս ելածը 800,000 տակառաչափ է: Եր հոս դրած պատկերը Տըրհամի կոմսութեան մէջ գտնուած ածխահանքն է, որ Լնգղիայի հանքերուն մէջ շատ բանուկներէն է, ու մէջը 526 գործաւոր կայ:

Ա. Լնգղիայի Գոյն: Որովհետեւ հանքային ածուխը երկրիս խիստ խորունկ կը կը գտնուի, անոր համար փորելու ու ջրերը պարպելու մեքենաները հաստատելէն առաջ՝ աղէկ կընային թէ փորուելու տեղը հանքային ածուխ կը գտնուի՞ թէ չէ. ապա թէ ոչ, 100,000 կամ 150,000 ֆրանք փուճ տեղը կ'երթայ առանց բան մը չահելու: Ուստի առաջ խորհուրդ կը հարցնեն գիտուն ու փորձ առաջնորդի մը, ու ետքը ձեռք կը զարնեն աշխատանքին: Հետեւին ածխահանքը 1080 ոտք խոր է. ասկէ կ'իմացուի թէ որչափ աշխատութիւն կ'ուզէ այսպիսի փոս մը փորելու համար. վասն զի առաջ ջուրը կը պարպեն, որ ամենէն մեծ աշխատանքն է, ետքը չորս դին պատ կը հիւսեն. երբեմն խեղճ գործաւորները ան տեղի փաստակար կազերէն յանկարծակի զարնուելով կը խոզուին:

Բ. Ջուրը պարպել: Վետինին խոր տեղուանքը փորելու մեծ արգելք է ջուրը, որ անդադար փորուած տեղերը կը կոխէ. ուստի շոգեշարժ գործիքներով ու ջրհաններով անդադար դուրս կը պարպեն ան ջրերը: Հետեւին ածխահանքին մեքենան 300 ձիու ոյժ ունի ու անդադար կը բանի. աս անընդհատութիւնը շատ հարկաւոր է, անանկ որ եթէ միայն մէկ

1 Խո. Tonnellata. Մէկ տակառաչափը 2000 լիտր է:



ա Վեր ելած ածուխ: - Գատերը ծակելու մուրճ: - Ե Վար իջնող գործաւորներ: - Դ Ածուխը մաղողներ:

վայրկեան մըն ալ չջարժի՝ բոլոր ջրհո-
րը ջրով կը լեցուի. ուրիշ իրեք մեքե-
նայ ալ կայ, ամէն մէկը 90 ձիու ու-
ժով, ասոնք ալ հանքային ածուխը

վեր հանելու կը գործածուին: Օլար
մանալին աս է որ գործիքներուն
կաթսաներուն շոգի տուողը մեծ մե-
քենային հանած ջրերն են, կրակն

ալ մէկալ մեքենաներուն հանած ածուխէն է :

Գ. Բժուի հանել : Բժիսահանքերուն ամէն մէկ ճամբաները գետնափոր տեղուանք են , սաստիկ մուծ , գրեթէ ուծը ոտք բարձր և տասնըւորս ոտք լայն . երբոր մէկը ան խոր տեղուանքը մտնելու ըլլայ , թէպէտ և ամէն բան պայծառ կը տեսնէ , բայց ինքզինքը շօշափելի խաւարի մը մէջ կը կարծէ : Բն ճամբաներուն մէջ՝ պատին ամէն մէկ տասուերկու ոտք երկայնութեանը վրայ մէյմէկ հոգի կ'աշխատին քովէ քով : Բոնք առաջ մուրձով մը ածուխի կտորին չորս կողմը կը ծակծրկեն կը կոտորտեն , ետքը մէջտեղէն ծակ մը կը բանան , մէջը վառող կը լեցնեն , ու կրակ տուածնուն պէս ածուխները վար կը թափին : Երկայն կ'ըլլայ ասոնց ամէն գործողութիւնները մէկիկ մէկիկ ստորագրել . միայն աս ըսենք որ Հեթութոնի ածխահանքէն տասնըւոր ժա մուան մէջ 600 տակառաչափ ածուխ կ'ելլէ . թէ որ շոգեշարժ մեքենայ չբանեցնէին , ասոր երեսունին մէկը հազիւ կրնային հանել :

Դ. Բժուի հաղել : Յայտնի է որ հանքային ածուխը վաճառքի հանելէն առաջ փոշիներէն ու խիճերէն զատելու է . աս բանիս համար ածուխը մաղել հարկ կ'ըլլայ . բայց տեսնելու բան է որ ինչ զարմանալի ճարտարութեամբ կ'ընեն աս գործողութիւնը : Ասան զի մասնաւոր գործիքներով ածուխին զամբիւղները վեր ելլելուն պէս , իրենք իրենցմէ մաղելու տեղը կ'անցնին՝ որ ծուռ մակարդակ մըն է . անկէ ալ նոյնպէս կ'երթան՝ սնտուկի ձեւով պատրաստուած կառքերու մէջ կը լեցուն . շոգեգործին ալ երկրթէ ճամբուն վրայէն կ'առնէ կը տանի ան կառքերը :

Ե. Բժուի քեղե քեղ քիսադրել : Հանքային ածուխը կառքերու մէջ լեցուելէն ետքը ուրիշ բան չմնար , բայց եթէ տանիլ նաւերու մէջ լեցնել . և աս բանիս համար ինչպէս որ ըսինք՝

երկրթէ ճամբան կը գործածուի . մանաւանդ թէ երկրթէ ճամբան գտնելու պատճառն ալ աս ածուխը եղաւ : Բնգլիայի մէջ գրեթէ բոլոր ածխահանքերը գետերու մօտ են , ու ամէնքն ալ երկրթէ ճամբայ ունին : Պզտի ածխահանքերու մէջ շոգեշարժ մեքենաներուն ըրած գործողութիւնները սովորաբար ձիերը կը կատարեն :

Բնոյ բնական նշանները :

Ապագայ :

Բն ամուս մէջ ամառուան տաքը կ'իջնայ , աշունը կը հասնի , և գիշերն ու ցորեկը հաւասար կ'ըլլան :

Սշակները ամուս սկիզբները կ'երթան այգիները աչքէ անցնելու :

Եշան կը դնեն լաւ որթերուն վրայ , որ անոնց ձիւղերը տնկեն անշահ որթերուն տեղը :

Ենկէ վերջը կը սկսի այգեկութիւնը , պատրաստութիւնը , որ ան ալ մեծ հանդէս է :

Պարտէզներու մէջ ալ աշխատանքը պակաս չէ . ձմեռուան համար կաղամբ ու աղցաններ կը տնկեն : Պահելու դդուները կը ժողվեն ու արեւու մէջ կը դնեն . գետնախնձորները հողուն տակէն կը հանեն : Տաք տեղուանք ձմեռուան պտուղները կը ժողվեն :

Եաղիկ հոգացողը կը տնկէ նարկիզը , անեմոնը , յասմիկը , հրանունկը : Սանուշակը ու մեխակին արմատ ձեգած ընձիւղները կը զատէ . հասած հունտերն ալ կը ժողվէ :

Ա երջապէս պարապ անցնելու ամիս չկայ երկրագործին . ու մէկ ամիս մը պարապ կենայ նէ , բոլոր տարւոյն վնաս կ'ըլլայ : Եսանկ ալ ուսմունքէ հանգիստ ընողը աս միջոցիս , թէ որ բոլոր ատենը պարապ անցնէ , միտքը կը տկարանայ , ու վերջը շատ կը յոգնի :